Պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման վերլուծություն

11.11.2022թ.

2021-2022 ուստարվա սկզբին ԱԲՀ-ում գործող «Պրակտիկայից ուսանողների բավարարվածության գնահատման» կանոնակարգի համաձայն անցկացվել է առցանց հարցում:

1. **Հարցման նպատակները.**

- Ձեռքբերել տեղեկատվություն ԱԲՀ-ի պրակտիկայի գործընթացի կազմակերպման վերաբերյալ:
- Բացահայտել պրակտիկայի գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, վերհանել պրակտիկայի ընթացքում առաջացած խնդիրները և մշակել դրանց շտկման ուղիներ:

2. **Հարցման գործընթացի կազմակերպումը.**

Ուսանողների՝ պրակտիկայից բավարարվածության առցանց հարցումներն անցկացվել են Google Forms ծրագրով պրակտիկայի մասնակից 2-5-րդ կուրսերի 359 ուսանողների շրջանում: Հարցմանը մասնակցել է 180 օտարազգի և 13 հայ ուսանող, որը կազմում է պրակտիկա անցած ուսանողների 54 %-ը: Հարցումը կազմակերպվել է ՈԱ առաջատար մասնագետի և Կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի կողմից:

Նշենք, որ 2021-2022 ուստարում ԱԲՀ-ի ուսանողներից 225-ը պրակտիկան անցել է ՀՀ-ում, իսկ 134-ը՝ արտերկրում: Արտերկրում պրակտիկան անցկացվել է անհատական, ոչ համալսարանական բազաներում՝ կնքված համաձայնագրերի հիման վրա:

3. **Հարցման արդյունքների ամփոփում.**

ՈԱ առաջատար մասնագետը կլինիկական աշխատանքների գծով պատասխանատուի հետ մշակել, վերլուծել է հարցումների արդյունքները և

տրամադրել բոլոր շահագրգիռ մարմիններին: Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի հետ ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել, ներկայացվել են պրակտիկայի բարելավման առաջարկություններ, որոնք ներառվել են ստորև ներկայացվող վերլուծությունում:

1.Նշեք Ձեր ֆակուլտետը.



2. Ո՞ր կուրսում եք սովորում.



3. Որտե՞ղ է անցկացվել Ձեր պրակտիկան /նշել երկիրը/.



Ինչպես երևում է գծապատկերից, հարցված ուսանողները պրակտիկա անցել են ոչ միայն ՀՀ-ում, այլև 5 տարբեր երկրներում: Հավելենք, որ 1 ուսանող էլ պրակտիկա անցել է Ղազախստանում:

3.1. Որտե՞ղ է անցկացվել Ձեր պրակտիկան /նշել բուժհաստատությունը/:

Այս հարցին պատասխանել է հարցված ուսանողներից 100-ը, որոնցից 45-ը նշել է ՀՀ բուժհաստատությունները՝ այդ թվում՝ ԱԲՀ ԳԲՈՒԿ-ը, Ս.Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ն, Արմենիա ԲԿ-ն, Արթմեդ, Բեսթլայֆ, Մեդլայն, Շենգավիթ ԲԿ, Քանաքեռ-Զեյթուն ԲԿ, մյուսները նշել են արտերկրի բուժհաստատությունները:

4. Բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպչական աշխատանքներից:



- Ինչպես երևում է գծապատկերից, հարցվածները բարձր են գնահատել իրենց ղեկավարի աշխատանքը, անբավարար գնահատական չի տրվել:
- Պրակտիկայի ծրագրի իրականացումը լավ և գերազանց է գնահատել հարցվածներից 130-ը /36.5%/: Հարցվածներից 13-ը /3.6%/ այն գնահատել է անբավարար:
- Ծրագրի տևողությունը լավ և գերազանց է գնահատվել 130 ուսանողի կողմից /36.5%/, իսկ 14-ի կողմից /3.9%/՝ անբավարար:
- Պրակտիկայի անցկացման վայրի գնահատական տրվել է հարցման մասնակիցներից 164-ի կողմից /46%/, այդ թվում 17-ը /4.7%/ այն գնահատել է անբավարար:
- Պրակտիկայի կազմակերպման գործընթացից հարցվածների մեծամասնությունը գոհ է, իսկ 11 հոգու անբավարար պատասխանից պարզ է, որ կան նաև դժգոհ ուսանողներ: Վերոնշված հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտություն է առաջանում ուսանողների հետ կազմակերպել հանդիպումներ:

5. Բավարարվածությունը պրակտիկայի արդյունավետությունից:



Ընդհանուր առմամբ, ուսանողների բավարարվածությունը պրակտիկայի արդյունավետությունից գնահատվել է 4 հարցի շրջանակում, և հարցվածների ճնշող մեծամասնության կողմից գնահատվել է գերազանց և լավ:

Իհարկե, ունենք անբավարար գնահատականներ, որը հատկապես վերաբերում է «Որքանո՞վ արդարացվեցին ձեր ակնկալիքները պրակտիկայի ընթացքում» հարցին, իսկ մյուս 3 հարցերի վերաբերյալ տրված անբավարար գնահատականները համեմատաբար փոքր թիվ են կազմում: Հարկավոր է պարզաբանել, թե հարցված ուսանողներից 10-13-ը ինչու են անարդյունավետ համարել պրակտիկան: Հետևաբար, ուսանողների հետ հանդիպում-քննարկումները անհրաժեշտություն են դառնում ծագած խնդիրները պարզաբանելու և ժամանակին շտկելու համար:

6. Նշեք պրակտիկայի ընթացքում ձեռքբերված ամենակարևոր գիտելիքը, կարողությունը, հմտությունը:

	Պատասխաններ	f*
1.	Պրակտիկ գիտելիքներ	5

f* Քը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

2.	Տեսական գիտելիքներ	3
3.	Պրակտիկ հմտություններ	5
4.	Փորձ	2
5.	ԷՍԳ-ի կատարում և ժապավենների մեկնաբանում	10
6.	Ներարկումներ՝ ներերակային, միջմկանային	15
7.	Ռենտգեն հետազոտություն	1
8.	Հիմնական գիտելիքներ որոշ դեղամիջոցների և դրանց դեղատոմսերի մասին	4
9.	Հաղորդակցական կարողություններ	1
10.	Կարերի դնում	4
11.	Ինքնուրույնություն, ինքնակրթություն	1
12.	Իմացանք, թե ինչպես չափել արյան ճնշումը	7
13.	Բուժքույրական պրակտիկայի հիմունքները	2
14.	Ես վայելեցի պրակտիկան և շատ բան սովորեցի Հնդկաստանում իմ պրակտիկայից: Ձեռքբերեցի նոր գաղափարներ: Տեսական գիտելիքներս անբավարար էին:	1
15.	Վիրաբուժական միջամտության վերաբերյալ գիտելիքներ	2
16.	Շտապօգնության ծառայության ընթացքում մենք ավելի շատ հնարավորություն ստացանք տեսնելու տարբեր դեպքերով հիվանդների	1
17.	Ընդհանրապես ոչինչ չեմ սովորել: Սովորել եմ ներարկումներ անել:	1
18.	Ես վայելեցի իմ պրակտիկան և շատ բան սովորեցի	1
19.	Ներկա եմ եղել բժշկական միջամտություններին	1
20.	Ձեռքի հմտությունների բարելավում	1
21.	Միջանձնային հաղորդակցման հմտություններ, քննադատական մտածողություն, ժամանակի կառավարում, հիվանդների վերլուծություն	1
22.	Հիվանդների զննում	1
23.	Հիվանդի անամնեզի հավաքում	2
24.	Օձի խայթոցի դեպքում անհետաձգելի բուժօգնություն: Էխինակոկային կիստայի հեռացում:	1
25.	Հիվանդի հետ շփում, բժիշկ-հիվանդ հարաբերություններ	8
26.	Հիվանդությունների ախտորոշում	6
27.	Խորհրդատվություններ հիվանդին	1

28.	Տուժածները և շտապ բուժօգնությունը .... հիմնականում շաքարային դիաբետի դեպքեր	1
29.	Սովորեցի խոսել հիվանդների հետ առանց վարանելու, ծանոթացա վիրահատության ընթացակարգին	1
30	Որպես ապագա բժիշկ՝ ձեռքբերեցի հիվանդների հետ շփման վստահություն	3
31.	Լինել ուշադիր, ճշտապահ, հարգել բժշկի աշխատանքը և հիվանդներին	1
32.	Վիրակապեր դնել	1
33.	Հոգ տանել հիվանդների մասին, խնամել	3
34.	Անհետաձգելի իրավիճակներում կողմնորոշվելու և աշխատելու մասին	4
35.	Սիրտ-անոթային վերակենդանացում	1
36	Հիվանդության պատմագրի լրացում	2
37.	Ծանոթացում հեմոդիալիզի գործընթացին	1
38	Ինչպես հետազոտել հիվանդին, կենսական նշանների ստուգում	2
39	Նեֆրոլոգիական հիվանդությունների տարբերակիչ ախտորոշում և այլն	1
40.	Համբերություն	2
41.	Ես շատ տեսական գիտելիքներ ստացա տարբեր տեսակի ներարկումների, կաթետերի, հիվանդի խնամքի վերաբերյալ:	1

7. Արտահայտեք ձեր կարծիքը պրակտիկայի վերաբերյալ:

- Լավ էր, օգտակար (բարելավել են հիվանդի զննման, հիվանդի հետ շփման կարողությունները, շատ տեսական, պրակտիկ գիտելիքներ, հմտություններ են ձեռքբերել, ծանոթացել բուժման տարբեր մեթոդների, լսարանային գիտելիքների հիման վրա փորձ ձեռքբերել և այլն)՝ 50 ուսանող
- Գերազանց էր (պրոֆեսիոնալիզմի և հաղորդակցության մակարդակը գերազանց էր, ավելի շատ բան սովորեցի, քան տեքստերից, ամրապնդեցի տեսական գիտելիքներս)՝ 7 ուսանող
- Բավարար էր, ակնկալվում է ձեռքբերել ավելի գործնական հմտություններ, հատկապես վիրաբուժության մեջ՝ 1 ուսանող:
- Անբավարար էր՝ 1 ուսանող

- Պրակտիկայի ղեկավարը շատ է օգնել (Պրակտիկան կարճ էր, բայց մեր ղեկավարը մեզ շատ բան սովորեցրեց)՝ 3 ուսանող
- Դա ուսուցման հիանալի փորձ էր: Ես շփվել եմ տարբեր հիվանդություններ ունեցող մարդկանց հետ, նրանց օգնելն ու բժիշկների հետ աշխատելը օգնեցին ինձ շատ բան սովորել բժշկության ոլորտում՝ 1 ուսանող:
- Շատ խոստումնալից էր՝ 1 ուսանող
- Ոչ լավ՝ 2 ուսանող
- Ոչ վատ՝ 1 ուսանող
- Պրակտիկան քիչ էր, կարճ էր՝ 4 ուսանող
- Ուսանողները լավ են սովորում հայերեն, որը կդարձնի հիվանդների հետ շփումն ավելի դյուրին՝ 1 ուսանող
- Մեզ անհրաժեշտ է պրակտիկա՝ վիրաբուժական բազմաթիվ դիտարկումներով:
- Պրակտիկան ժամանակի վատնում էր: Մենք ոչինչ չսովորեցինք:
- Վատ չէր, բայց կարող էր ավելի լավ լինել՝ 3 ուսանող:
- Կցանկանայի ավելի շատ պրակտիկա և գիտելիքներ՝ 2 ուսանող
- Այն հնարավորություն էր նոր կարողություններ ձեռքբերելու, հետազոտություն կատարելու համար՝ 1 ուսանող
- Ինձ դուր է եկել պրակտիկան, սակայն թղթապանակի լրացնելը անհանգստացնում է՝ 1 ուսանող
- Շատ գոհ եմ Հնդկաստանում անցկացրած իմ պրակտիկայից՝ 3 ուսանող:

8. Ներկայացրեք պրակտիկայի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

- Շատ պրակտիկաներ՝ 26 ուսանող
- Անցկացնել հիվանդանոցում՝ 10 ուսանող
- Ավելացնել տևողությունը՝ 6 ուսանող
- Լավ էր, ոչինչ չկա ավելացնելու՝ 11 ուսանող
- Պրակտիկան կազմակերպել ավելի մեծ կլինիկայում, որպեսզի շատ բան կարողանանք տեսնել՝ 3 ուսանող
- Ավելի շատ սարքավորումներ, մանեկեններ, գիտելիքներ՝ 7 ուսանող

- Ներդնել ճիշտ կրթական համակարգ, անցկացնել ծրագրին համապատասխան պրակտիկա՝ 2 ուսանող
- Կազմակերպել պրակտիկան Հայաստանից դուրս՝ 1 ուսանող
- Յուրաքանչյուր ուսանողի համար տրամադրել ավելի շատ պրակտիկայի ժամանակ: Ավելի լավ է վերապատրաստվել բժշկի մոտ, ով արդեն լավ գիտի անգլերեն (բժշկական ոլորտի հետ կապ չունեցող թարգմանիչը, ով պարզապես տիրապետում է անգլերենին և հայերենին, չի կարող պատշաճ կերպով օգնել մասնագիտական տերմինների առումով): Մենք տեսել ենք հիվանդի հետ խնամքի մի կաթիլը՝ 1 ուսանող
- Լավ հիվանդանոցներ տրամադրել, ոչ թե Քանաքեռ-Զեյթուն ԲԿ-ն՝ 1 ուսանող
- Ավելի շատ շփվել հիվանդների հետ ՝ 8 ուսանող
- Մենք 5-րդ կուրսում ենք և շատ գործնական գիտելիքների պակաս ունենք, ինչը իսկապես վատ է՝ 1 ուսանող
- Պրոպեդևտիկայի հիմունքների ուսուցանում՝ սիրտանոթային, աղեստամոքսային համակարգերի և թոքերի զննում, անամնեզի հավաքում՝ 1 ուսանող
- Շաբաթական մեկ պրակտիկա անցկացնել հիվանդանոցում՝ 1 ուսանող
- Ավելի լավ կազմակերպել՝ 2 ուսանող
- Համբերատար լինել ուսանողների նկատմամբ՝ 1 ուսանող
- Վերահսկել պրակտիկայի գործընթացը՝ 1 ուսանող
- Մասնակցություն հմտության ձեռքբերման գործընթացին՝ 1 ուսանող
- Անհետաձգելի բուժօգնության վերաբերյալ պրակտիկա՝ 1 ուսանող

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, պրակտիկան անփոխարինելի հնարավորություն է ուսումնառության ընթացքում ձեռքբերած գիտելիքների գործնական կիրառման և ամրապնդման, մասնագիտական կարողությունների ու հմտությունների ձեռքբերման, դրսևորման, ինչպես նաև դրանց կատարելագործման տեսանկյունից: Այս ամենը մեծապես կախված է պրակտիկայի կազմակերպման և անցկացման արդյունավետությունից:

2021-2022 ուստարում ԱԲՀ ուսանողների շրջանում անցկացրած պրակտիկայից բավարարավածության վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները ամփոփելով՝ կարող ենք ասել, որ ունենք հարաբերականորեն «թույլ» կողմեր, որոնք վերաբերում են պրակտիկայի տևողությանը, առկա են ուսանողների կողմից որոշ դժգոհություններ՝ կապված պրակտիկայի վերահսկողության, պրակտիկայի ծրագրի լիարժեք յուրացման հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրակտիկայի գործընթացում առկա թերություններն ու բացթողումները շտկելու և հետագայում բարելավելու նպատակով՝ առաջարկվում է.

- հարցման արդյունքները քննարկել համապատասխան ստորաբաժանումներում՝ պարզաբանելով ուսանողների ցանկությունները բավարարելու օբյեկտիվ հնարավորությունները:
- Նման հնարավորությունների բացակայության կամ սուբյեկտիվ պատճառներով թերացումների փաստը տեղեկացնել ուսանողներին, հարցը դարձնելով նրանց հետ արդյունավետ քննարկման առարկա: